XVII

ԱՆԱՆՈՒՆ ՎԱՆԵՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (XVII—XVIII ԴԴ.)

Առաջարկվող բնագիրը վերցրել ենք «Դիւան»-ից[1]։ Այն ունի «Անցք Վասպուրական աշխարհի» խորագիրը և ընդգրկում է 1386—1726 թվականները[2], շուրջ 340 տարվա տեղեկություններ։ Սակայն, ինչպես նշել ենք, հեղինակի ժամանակակից դեպքերը սկսած պետք է լինեն 1669 թվից[3]։ Ժամանակագրության բնագրում հեղինակն իր մասին ոչինչ չի հայտնում, թեև մի քանի վկայություններից՝ 1684, 1693 թթ. իմանում ենք, որ նա իր նկարագրած դեպքերին ժամանակակից է։ Հեղինակը վանեցի է և տեղեկություններն էլ գերազանցապես վերաբերում են Վանում տեղի ունեցած իր ժամանակակից դեպքերին։

Առկա եղած տեղեկությունները հնարավորություն են տալիս մոտավոր գաղափար կազմել ժամանակագրության հեղինակի պատմագիտական ըմբռնումների մասին։ Նա չի բավարարվել մանր, երբեմն աննշան վկայությունների, կամ թագավորների, իշխանների և փաշաների սոսկ հաջորդական կարգը կազմելով, ընդհակառակը, նա ուշագրավ և արժեքավոր փաստեր է հաղորդում Վանի և շրջակայքի ներքին կյանքից։ Բերված տեղեկությունները, երբեմն, թեև համառոտ են, սակայն դրանք բազմազան լինելով, ընդգրկում են իրականության շատ կողմերը։ Հեղինակը դեպքերի լոկ արձանագրող չէ, նա հաճախ կոնկրետ երևույթների նկատմամբ ցույց է տալիս իր վերաբերմունքը։ Այս առումով բնորոշ է այն փաստը, որ երբ խոսվում է Վանում Սարգիս Կիպրացու աղանդավորական գործունեության մասին, հեղինակը համակրանքով է վերաբերվում վերջինիս, նրան կոչելով «յոյժ պահացող և առաքինի»։ Հեղինակի առանձին վկայությունները մերկացնում են Օսմանյան Թուրքիայի հարկային ծանր քաղաքականությունը, հայ հոգևորականության մեջ առաջ եկած ներքին պայքարը աշխատավորությունից ստացած եկամուտները բաժանելու համար։ Ուշագրավ են փաշաների կամայականությունների և ասպատակությունների դեմ Վանի բնակիչների ըմբոստացումներին վերաբերող փաստերը։

Թե ե՞րբ է կազմվել ժամանակագրությունը, որոշակի ցուցում չունենք, սակայն, նրա մի վկայությունը հնարավորություն է տալիս որոշել այդ

---

[1] Գիրք Ժ, էջ 103—122։

[2] Ղ. Դաշյանի ժողովածուների ցուցակի Բ մասում նշված վանեցի Անանուն պատմագիրը, որն իր աշխատությունը «Վանի մեծ սովից սկսելով (1606) հասցնում է 1726», (էջ 59), պետք է այս բնագիրը լինի։

[3] ՄԺ, 1, էջ 351։

հարցը։ 1697 թ. վկայություններից մեկի մեջ կարդում ենք «...յունվար 27 Կարապետ վարդապետն վախճանեցաւ ի Վարագ...։ Եւ քաղաքացիքն առաքեցին ի Բաղէշ և բերին զՍտեփաննոս վարդապետն և ի մարտի 22 կարգեցին զնա առաջնորդ քաղաքիս Վանայ, որ եկաց 18 տարի»։ Այստեղից, ինչպես դժվար չէ ենթադրել, ժամանակագրությունը կազմվել է 1715 թվին (1697+18)։

Գ. Աղանյանցն առաջին անգամ հրատարակելով այս բնագիրը, ներածականում հետևյալ հետաքրքիր տեղեկությունն է հայտնում. «Վասպուրականի այլ և այլ անցքերի ժամանակագրությունը քաղել ենք Փիրղալեմյանի հավաքածոյքից, և մասամբ մեր Դիւանի նիւթերից և պարունակում է 1386—1707 թվի պատմությունը... Իսկականը որ ոչ հիշատակարան է ունեցել և ոչ հեղինակն է հայտնի, Փիրղալեմյանին տվել է արտագրելու Վանի Նորաշեն եկեղեցու Միքայել քահանան»[1]։

Նշանակում է այս ժամանակագրության սկզբնական բնագիրը մեզ չի հասել, այլ սկզբնական բնագրում կատարված են ավելացումներ իր իսկ հրատարակչի կողմից։

Այս բնագրի բազմաթիվ վկայություններից գտնում ենք մեկ ուրիշ Անանուն Վանեցու ժամանակագրության մեջ[2] ավելի համառոտ, երբեմն ոչ մանրամասն ձևով։ Մեզ թվում է, ինչպես արդեն նշել ենք, այս երկու բնագրերի հեղինակներն իրարից անկախ են կազմել իրենց ժամանակագրությունները[3]։ Սակայն, հավանական ենք համարում այն, որ Գր. Վարագեցու և XII ժամանակագրության մի քանի վկայությունները մուծվել են սրա մեջ։ Համապատասխան տեղեկությունների ծանոթագրություններում կնշենք այդ բանը։

---

[1] «Դիւան», գիրք Ժ, էջ 36։

[2] ՄԺ, 1, էջ 357—360։

[3] Նույն տեղում, էջ 352—353։

XVII

ԱՆՑՔ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ

ՊԼԵ (1386) Լանկ Թամուրն եկ ի վերայ Վանայ, և աւելի 103
քան զերեք հազար մարդ կոտորեաց։

ՋՂԹ (1550) սուլթան Սիւլէյման էառ զՎան[1]։

ՌԾԵ (1606) սաստիկ սով եղև ի քաղաքն Վան և յԱրզրում.
5 մինչ զի կապիճ կորեկն դահեկան մի եղև, յորոյ պատճառէ այն-
չափ մարդ մեռան որ թաղել ոչ կարէին, այլ վիհ մեծ փորէին
և զմեռեալսն սայլի բարձեալ տանէին և զամենեսեան ի ներս
լնուին, և զհողն ի վերայ կուտէին, յորոյ վրկեսցէ զմեզ Քրիստոս[2]։

ՌՁԴ (1635) սուլթան Մուրատն եկն ի Վան և դարձաւ։

10 ՌՂ (1641) ի փետրվարի հնգին սաստիկ և ահագին շարժ
եղև ի քաղաքն Թաւրէզ. և բազում ապարանք կործա || նեցան 104
և յոլով մարդիկ ի ներքև հողին մնացին[3]։

ՌՂԷ (1648) յապրիլ 2, յաւագ ուրբաթի գիշերն՝ յոյժ ահա-
գին շարժ եղև ի քաղաքն Վան, որ և կործանեցաւ մասն ինչ
15 պարսպի քաղաքին. և բազում եկեղեցիք և մաչիթներ փլան և
անթիւ մարդիկ ի ներքոյ տանց մնացին. և Վարագայ եկեղեցիք
փլան[4]։

ՌՃ (1651) պիղծն Զօմար թալանեաց զՎարագ, և զսուրբ
Նշան տարաւ ի Խոշապ. և յետ չորս տարոյ բերին զսուրբ նշան
20 ի քաղաքն Վան և եդին ի Տիրամայր եկեղեցին ձեռամբ խոջայ
Մարխասին[5]։

ՌՃԸ (1659) սուրբ Վարգան եկեղեցին նորոգեցաւ ի Վան
քաղաք ձեռամբ խոջայ Ամիրին սրբատաշ քարամբք։

ՌՃԺԱ (1662) ղՀայեայ Զալապին սպանեցին ի Վան։

25 ՌՃԺԸ (1669) եղև շարժ ի քաղաքն Վան և ՁԵաս ինչ ոչ
եղև, բայց ի յոտն || Վարագայ լեառն մի ոստեալ ի տեղւոջէն և 105
թռուցեալ անկաւ ի ձորն և արգելեաց զգետն, որ ի վերուստ
անտի իջանէ և կառեալ կապեցաւ ջուրն անդէն ժամս բազումս,
մինչև ինքեան ընդ ինքեան ճանապարհ արար գնացից իւրոց.
30 և խավանեցաւ ճանապարհ ջրոյն, որ ի գետոյն անտի ի վերուստ
բաժանէր և գայր ի վանքն և վարէր զՋրաղացն վանիցն, զի նո-
վաւ կառավարիւր վանքն. և այլ ոչ գոյր հնար այլ ճանապարհաւ
գալ ջրոյն այնորիկ. այլ անկեալ ընդ ձորն խառնեցաւ ի գետն
և գնայր, վասնորոյ հանճարեղ խորհրդականն այն Յովհաննէս

վարդապետն, որ ի ժամանակին այնմիկ էր առաջնորդ անուանի
վանուցն Վարագայ, որոյ մականուն Թիւթիւնջի ասէին, սա լեալ
էր պատրիարգ ի մեծ քաղաքն Բիւզանդիոյ և եկեալ աստ եղև
առաջնորդ, և ի միասին տիրէր Սալնապատայ վանիցն ևս. այլ
5 և տիրեաց Հոգւոց վանիցն ևս. և եղև կաթողիկոս Աղթամարայ.
սա հնարեաց այլ իմն կերպիւ բերել ղջուրն ջրաղացին ի վանքն.
և զանշարժ լեառն և զանհուն վէմն ետ կտրել քարահատացն, որ
և անդէն կատարեցաւ հրաման. և կտրեցին զանրաւ արձանն
աւելի քան զդիրկս տասն, այնպէս մինչ երկու մարդ մտեալ ի
10 ներքս ի միասին գնան. և ձգեցին զջուրն ի ներս և բերին ի
ջրաղացն. բայց զանտանելի նեղութիւն և զանրաւելի ծախսն,
որ ի վերայ եղև ոչ գոյ թիւ և ոչ համար։ Եւ յետոյ այս վար-
դապետն եղև գլուխ աղգին Ցռանկաց և եկն ի վերայ Թուրքին[5].
յորոյ աւուրսն էր վաքիլ Վարագայ խոճայ Փիրումն և աւագ
15 երէց տէր Մինասն և վերակացու գործոյն Զմշկայ տէր Աւետիսն,
որ եղև յետոյ արհիեպիսկոպոս և գործակալ սուրբ Էջ || միածնայ. 106
այլ զխարճն Ալթունեց խոճայ Մարխասն հոգաց։

Ռշիդ (1675) եկն ի քաղաքն Վան Սարդիս վարդապետ ոմն,
որ էր ինքն արհիեպիսկոպոս և առաջնորդ Կիպրոս կղզոյն, որոյ
20 ոչ գոյր ձախ ձեռն. այլ իբրև զքառասնօրեայ տղայի էր փոքրիկ.
սա սկսաւ քարոզել և խօսել հերձուած, զի ասէր ոչ է պարտ
քրիստոնէից կանանց ի ծնանել զտղայս պահել քառասունս, այլ
այն Աստուածածնին միայն վայել էր պահել. որոյ չար համբաւ
տարածեցաւ ե լու եղև ընդ ամենայն աշխարհ, և ժողովեցան
25 բազում վարդապետք. ընդ որս էր և Մակուեցի Իսահակ վարդա-
պետն և նորին աշակերտ Սարգիս վարդապետն Կաֆայեցին և
Վարդան վարդապետն Բաղիշեցին, և Մարտիրոս վարդապետն Գա-
զատացին և Յովասափ վարդապետն Ղափանցին, որ էր առաջ-
նորդ քաղաքին. այլ և Թումայ վարդապետն Գանձակեցին և
30 Վարդան վարդապետն Գաւաշեցին և Գրիգոր վարդապետն Ան-
արծաթն, որոյ մականունն Բոբիկ ասէին. քանզի ոչ ճոխ և փա-
ռաւոր, այլ գծուծ կերպարանօք՝ ոտիւք ինքն միայն շրջէր յաշ-
խարհի և քարոզէր և յումեքէ ինչս ոչ առնոյր. և այլ ևս բազում
աբեղայք և վարդապետք և կարգաւորք ժողովեցան և վարեցին
35 զնա ի քաղաքէն։ Այս Սարդիս վարդապետս Կիպրացի էր, յոյժ
պահացող և առաքինի. և էր ի ներքոյ հանդերձին մազեղէն գըլ-
գլայս զգեցեալ ի վերայ մերկ մարմնոյն, որ էր բոլանդակ բևեռս.
և միշտ խոցոտէր զինքն. և բարակ պարան էր գոտի նորա, որ
կապէր պինդ զմէջս իւր և այնու տանջէր զինքն. բայց զանասելի
40 բանս խոսեցաւ, սորա մականուն Զօլախ վարդապետ ասէին. || 107
որոյ ձախ ձեռաց երկու մատն կայր փոքրիկ, որպէս տղայի և ոչ
գոյր բազուկ այլ կապեալ էր ի թևն։

Ռշիէ (1678) Բաքրը փաշան Վանայ յոյժ պատերազմեցաւ
ընդ քաղաքացիսն և ոչ կարաց յաղթել, զի Ասլան աղան առեալ
45 զզօրս իւր և ելեալ ամրացաւ ի բերդն. և ոչ յաղթեցաւ։ Այս
Բաքրը փաշայս զխօջայ Ալխասն կախեաց ի փայտէ, որոյ մակա-

նուն Լէշկէր ասէին. և ոչ ետ հրաման թաղել զնա. այլ գաղանք և թռչունք կերան զմարմին նորա. այս Ալխաս բազում բարութիւնս արար Հայոց և ըտրի անուն եթող յետ իւր, որ և տէրն իւր ողորմեսցի[6]։

.5 ՌՃԻԸ (1679) Մուսլի փաշան Վանայ հրամայեաց Հայոցն մորուսն թողուլ։ Ի սոյն թուին Կարապետ վարդապետն եղև առաջնորդ։ Յայսմ ամի անճոռնի և պարթև կաթողիկէն, որ ասի Իւչքիլիսայ, վերստին նորոգեցաւ ի յերկիրն Բագրեւանդ՝ ձեռամբ Իսահակ վարդապետին[7], որ ի Լանկ Թամուրէն խանգարեալ կայր։

.10 ՌՃԻԹ (1680) Ջանփօլատ օղլին զղայի լաճ Իսաղ աղան և զՋաթաւ օղլին, և ներքինի մի խեզտեաց. սորտ ջորին ծնաւ, որ և յետ սակաւ աւուրց և ինքն սատակեցաւ։ Սա հրամայեաց Հայոցս զփակեզն առնուլ ի գլխոյն և գտակ գնել. այս Ջանփօլատ օղլիս զՍղդայ գեղի ժամատունն քակեաց, որ դեռ նոր էին շինեալ։ Ի

.15 սոյն թուին Ցակոբ հայրապետ վախճանեցաւ յԸստամպօլ, յորոյ աւուրս երևեցաւ յերկինս վարսաւոր աստղ մի, յոյժ մեծ և ահագին. և երևեցաւ աւելի քան զքսան և հինգ օր։

ՌՃԼ (1681) քարախառն կարկուտ անկաւ յՍտամպօլն, որ մէկ՝ հարիւր || գրամ կշռեցին. և բազում ՁԼաս եղև յՕրթայ-քօյն 108

.20 և էր յունիս 9։

Ի սոյն թուին ահագին շարժ եղև ի քաղաքն Երևան, մինչ զի անթիւ մարդիկ մեռան, որ և աւելի քան զկէս քաղաքին տապալեցաւ և ընկղմեցաւ[8]։

ՌՃԼԱ (1682) ի ժամանակս Ալի փաշային Վանայ, նորոգեցաւ սուրբ Ցակոբ եկեղեցին ձեռամբ տէր Գրիգորին. սոյն Ալի փաշայս զՍտեփաննոս և զԳրիգորն կախեաց ի փայտէ անմեղ, յորոց վրայ լոյս ծագեցաւ[9]։

Ի սոյն թուին կին մի ի քաղաքէն Վանայ, Գայիանէ անուն, ուրացաւ զՔրիստոս և տաճկացաւ. և ընդ իւր տարաւ զորդին և

.30 զդուստրն. և ինքն եղև առն միոյ Թուրքի. սա յետ չորս ամի ծնաւ աքաղաղ մի ի տես և ի ցոյցս ամենեցուն, այլ անփետուր։

Ի սոյն թուին Եղիազար կաթողիկոսն ելեալ յԵրուսաղէմայ եկն յէջմիածին[10]։ Ահագին շարժ եղև ի Վան և ի Բաղէշ մայիս 19, բայց նախախնամութեամբն Աստուծոյ շինուած ինչ ոչ խախ-

.35 տեցաւ։

ՌՃԼԲ (1683) Օմար փաշան Վանայ զՄօշապայ պարոն սՄեռտին անուն խաբէութեամբ երեր առ ինքն, և սպան զնա. սա հրամայեաց պլիկ կտրել պղնձէ, և սահմանեաց զդրամն տաղմայ զարնել։

.40 Ի սոյն թուին համբաւ հանին, թէ հաւու փորն օձ կայ, և այնքան ղենեցին, որ ամենևին հաւ ոչ գտանիւր ի քաղաքն[11]։

Ի սոյն թուին Վարդան վարդապետն և Իգնատիոս վարդապետն վախճանեցան ի բանտի ի քաղաքն Վան։ Մարդակերպ գայլ մի երևեցաւ որ ցերեկի շրջէր ե բազում ՁԼաս առնէր և ընդ-

.45 դէմ մարդկանց պատերազմէր. || ասին թէ խօսէր ևս մարդապէս. 109
և մարդիկ ոչ իշխէին միայն գնալ յայգիսն, այլ միաբանէին

երեք և չորս ապա գնային. մինչ զի և փաշան հրամայեաց զորականացն սպանանել զնա և ոչ կարացին. և Սաֆարն սպան զնա[12]։

ՌՃԼԴ (1684) Օմար փաշան ըմբռնեաց չորս մեծ աղայ ի
5 Վանայ և էարկ ի ղընաան. և պահեաց աւելի քան զերեք ամիս. և յետոյ սպան զնոսա ի մայիս 8, Նալպանա օղլի, Ղատըր աղէն և Շաթըր օղլի, Իբրահիմ աղան[13]։

Ի սոյն թուին հոկտեմբեր 17, յերեկոյին եղև յորդ անձրև սաստիկ ի գիւղն Արտամետ. և եղև զարմանք մեծ, զի շուրջ զգե-
10 դովն սաստիկ լոյս ծագեաց, մինչ զի գիշերն որպէս զցերեկ թուէր. և զի էր ժամանակ կալի, և ցորեանն՝ որք ի թեղ և որք ի շեղջ ամենեքեան որպէս զրոց վառէին և ոչ այրէին. նոյնպէս և արք, որք կային անդէն իւրաքանչիւր առ կալի իւրում, և եզինքն ամենեքեան որպէս զրոց վառէին և ոչ այրէին. և եթէ
15 արքն այնոքիկ այսր և անդր ուրէք երթային և կամ ի տունս, և ըոց զհետ նոցա երթայր. և այսպէս յոտից մինչև զգլուխ վառէին և ոչ այրէին. և այսպէս եկաց մինչև ի ժամս երիս և անյայտ եղև։

Ի սոյն թուին ի քաղաքն Վան, այր մի շինէր զտուն իւր,
20 և ի փորել զերկիր ետես, զի ելանէր սնդիկ յերկրէ, որ և ժողովեալ յամանս ինչ. և այս համբաւ լուր եղև ի քաղաքն ամենայն, մինչ զի փաշան և դատաւորն ևս գնացին ամենայն զօրքն իւրեանց ի տեղին տեսանել զիրն. և զի էր երեկոյ, հարին զվրան ի վերայ տեղոյն, և ձգեցին ի վերայ նորա կապերտ և զչորս
25 կողմն մատնեհարեցին. և թողին պա || հապանս անդ մինչև յառաւօտն. և ի վաղիւն կրկին ևս գնացին անդ բոլոր քաղաքն ամենայն և փաշայն և դատաւորն փողօք և թմբկօք և բացեալ տեսին զի ոչինչ էր[14]։ 110

Ի սոյն թուին մահմետական Տաճիկ մի ի քաղաքէն Ոստանայ, որ էր ինքն մօլայ եկն ի քաղաքն Վան. և գնացեալ առ
30 դատին՝ ասաց, թէ «Ես կամք ունիմ լինիլ քրիստոնեայ տամբ և ընտանեօք իմովք, քանզի ի տեսլեան յայտնեցաւ ինձ ակներև ստուգիւն ձեր, և ճշմարտութիւն ազգի նոցին, և արդ դու զի՞նչ հրամայես վասն այս բանիս։ Եւ նա խոժոռեալ ընդ բանս նորին՝
35 հրամայեաց տանել զնա ի բերդն. և արգելուլ անդէն ի բազում աւուրս, զի սթափեսցի և զգաստասցի, քանզի կարծեաց թէ յիմարեալ է. և պատուիրեաց ամենեցուն, զի մի յայտնեսցեն զհամբաւս այս քրիստոնէից. և թեթևութիւն լիցի հաւատոյս մեր. և նա կացեալ անդ ի բերդին զաւուրս բազում և բնաւ ոչ շար-
40 ժեցաւ ի հաւատոցս։ ոչ երկեաւ ի նոցանէ, և ոչ փոխեաց զխօսս իւր, այլ զնոյն բանսն յայտնի և համարձակ ասէր, թէ «Ես դառնամ ի հաւատոց ձերոց և լինիմ քրիստոնեայ». Վասնորոյ ընկեցին զնա յանբաւ բարձրութենէ բերդին ի վայր և նա եկաց կանգնուն ի վերայ ոտից իւրոց կենդանի. ընդ որ հիացեալ Տաճ-
45 կացն և այրեցին զնա ի տեղոջն յայնմիկ. և ի գիշերին յայնմիկ լոյս էջ ի վերայ նորա. և տեսողաց տեսեալ փառս տային Աստուծոյ։

Ի սոյն թուին Ջաֆար փաշայն Վանայ զՄանսուրն և զորդին իւր, և զկոյր Վէյգարն կախեաց ի փայտէ ի միում աւուր. որք աւելի քան զհարիւր տուն գողութիւն էին արարեալ[15]։ || 111
Այս Ջաֆարն առանց մուսալիմ գալու գնաց. սա ևս հրամայեաց
5 պլիկ կտրել, բայց սորա մեծագոյն էր քան զՕմար փաշային. և սորա մին և նորա երկուսն անցանէր ի մեր ժամանակս։

ՌՃԼԴ (1685) նոյեմբեր 22 յաւուր կիրակէի յոյժ սաստիկ շարժ եղև ի քաղաքն Վան. և նախախնամութեամբն Աստուծոյ ինչ ոչ եղև։

10 Ի սոյն թուին Ալի փաշայն Վանայ հրամայեաց Հայոցս, որ զքաղաքի շրջապատ խանդակն պեղեցին, որ և այնչափ սաստիկ էր հրամանն, որ ոչ ոք իշխէր արտաքոյ դրանն ելանել, զի զորս գտանէին սաստիկ պատժօք տանջէին և յոյժ ճշտիւ տուգանէին, որ և յոյժ նեղացեալ քաղաքացիքն և շրջակայ գիւղականքն աւելի քան զասսն օր փորեցին, այնչափ մինչ որ յինքենէ ջուր ել.
15 այլ և բերդն ևս բաղում տեղիս սա ետ նորոգել։ Սա գնաց ի վերայ Բաղիշու և անդէն մանղուլ եղեալ այլ ոչ դարձաւ[16]։

ՌՃԼԵ (1686) անուանի և մեծ վարդապետն Ներսէս, որոյ Անարծաթ ասէին, այր հրաշագործ և յոյժ սքանչելի, քանզի
20 ասէին, եթէ գեաոյ հանդիպի ոտիւք գնայ ի վերայ ջրոյն. և ծովու ևս. սա եկն ի քաղաքն Վան և անցեալ գնաց ի Սալամաստ և անդ վախճանեցաւ. սա ոչ առնոյր ինչս յումեքէ բնաւ և ոչ ինչ, ըստ հրամանի Փրկչին որ ասէ. «Մի ստանայք ոսկի և մի արծաթ, այլ ձրի առէք և ձրի տուք». և այսպէս առաքելանման
25 շրջէր ընդ ամենայն աշխարհ և քարոզէր զբանն կենաց. և բաղում նշանս և բժշկութիւնս առնէր։

ՌՃԼԶ (1687) յերկիրն Աղբակոյ եղև մեծ սքանչելիս ի սուրբ Առաքեալն || Բարդուղիմէոս, զի յարտաքոյ կողմանէ եկեղեցւոյն 112
յարևելից կուսէ, տեսին զի հերձեալ էր քարն. և ի միջոյ, պատ-
30 ուուածոյն կանաչ իմն բուսեալ և բերեալ կլոր մեծագոյն, մինչ զի տեսողաց հիացեալ փառս տային Աստուծոյ. և այս համբաւս տարածեցաւ ընդ ամենայն երկիր ընդ այն, մինչև եհաս ի պարոնն ևս. և ամենեքեան գային ի տեսանել. և եկեալ Թուրք մի յազգէն Մարաց ի տեսանել և մախացեալ ընդ բարի համբաւն՝
35 եհար նիզակաւ և ընկէց զնա յերկիր. և կոտորեաց և կամէր ուտել. և իսկոյն մոլեգնեալ կատաղեցաւ, մինչզի կապեալ եղև ի բալեկամաց իւրոց. և կամէին տանել զնա ի տուն իւր, որ և ոչ եհաս, այլ իբրև անցին ի վերայ պահս երկու կամ երեք, ի նոյն աւուր ի ճանապարհին սատակեցաւ և չեհաս ի տուն իւր. և զկլորն
40 այն բաժանեցին հիւանդաց մասն մասն, որք ընդ ուտելն առ ժամայն բժշկեցան. և ի տեղոյն յայնմանէ՝ ուր կլորն էր բուսեալ, զաւուրս երկու ջուր ըղխեաց, որ և տեսողացն փառս տային Աստուծոյ։

Ի սոյն թուին Ղայայլի Ղօզօղլի [Մահմատ][17] փաշան եկն ի
45 Վան, որոյ ընդդէմ ելին քաղաքացիքն և պատերազմեցան ընդ նմա. և ոչ եաուն թոյլ մտանել ի քաղաքն, մինչ զի թալանեցին

ևս զինքն ի գիւղն Աւանց. և զկնի սակաւ աւուրց դարձեալ գնացին ընդդէմ և մեծարանօք բերին ի քաղաքն։ Սա յետ երկրորդ գալստեանն իւրոյ հրամայեաց Հայոցս զիակեղն առնուլ ի գոլխոցն և գտակ դնել[18], որ եկաց այսպէս մինչև երեք ամիս և
5 ինքն շուտով մանզուլ եղև, զի խոնդքարն փոխեցաւ սուլթան Մահմատն, որ քառասուն տարի կալեալ էր զթագաւ || որութիւն 125
և վարէր զիշխանութիւն, սոյն ամի փոխեցաւ և եղև եղբայր նորին սուլթան Սուլէյման։

Ի սոյն թուին ի դեօղն Արտամետ աւուր ձագն, որ դեռ ևս
10 ելաւ ի հաւկթէն, իսկոյն կանգնեալ խօսեցաւ երեք անգամ և այլքն ի մէջ ձուին էին և ձայն տային։ Եւ ի սոյն աւուրսն տղայ մի ի յարգանտի մօրն ելաց ի նոյն գեօղն, որոյ ձայն բազումք լուան։ Եւ դարձեալ կին մի ծնաւ չորս տղայս արու, որոյ երկոցունցն ոչ գոյր նստոյ տեղի, այլ միարերթ էր, որք ընդ ծնա-
15 նելն մեռան. և դարձեալ ի նոյն գեօղն ոչխար մի ծնաւ և գառն էր առու և էգ ի միասին[19],

ՌՃԼԷ (1688) մեծ և անուանի Սուքիաս վարդապետն եկն ի քաղաքն Վան նուիրակ ի սուրբ Էջմիածնայ. սա էր աշակերտ մեծի և տիեզերալոյս հայրապետին տեառն Եղիազարի. և ինքն
20 էր անհաս փիլիսոփայ և հասակաւ կարճ և յոյժ բանաստեղծ. և գիտակ գրոց Լատինացոց և Տաճկաց, որ գրէր և ընթեռնոյր մինչ զի զարմանային այլազգիքն ընդ ուսումն նորա։

ՌՃԼԸ (1689) ի ժամանակս գարնան խիստ տղայոց մահ եղև։

Ի սոյն թուին սեպտ. 3 զՋամուշ օղլին սպանեաց փաշայն,
25 որոյ անուն էր Հասան և այլք ընդ նմա։

ՌՃԼԹ (1690) Թումայ վարդապետն վախճանեցաւ, որ էր այր հրաշագործ, յորոյ սուրբ մարմնոյն-վերայ էջ լոյս յերկնից, Սա էր ի յերկրէն Վասպուրականի, ի գեղջէն, որ ասի, Գանձակ[20]. և էր վերատեսուչ սուրբ առաքելոյն Թովմայի լուսընկալ սուրբ
30 դամբարանին. զորոյ լոյսընկալ սուրբ մարմին ևս հանգուցին ի մէջ դարպասին։

Ի սոյն թուին եղև անհաշտ խոո || վութիւն և աղմուկ ի քա- 126
ղաքն Բաղէշ ի մէջ վարդապետացն, որ լու եղև ընդ ամենայն կողմն տիեզերաց. և քաղաքն ամենայն երկուս բաժանեցան. և
35 [Շարաֆ] խանն եղև ի կողմն Վարդան վարդապետին և մասն ինչ քաղաքին ելին ի կողմանէ Մեսրովպ վարդապետին և բազում և անասելի և անթիւ գանձս հաւաքեցաւ ի տունս աշխարհակալին այն. և զկնի ելեալ գնացին յէջմիածին ի գանգատ առ կաթողիկոսն Եղիազար. և յետ բազում ինչս առնելոյ յերկուցն
40 կողմանէ զՄեսրովպ վարդապետն օրհնեաց եպիսկոպոս և թագաւորեցոյց ի վերայ աշխարհին[21],

ՌՃՄ (1691) սուլտան Սիւլէյման առաքեաց վոյվոյտայ ի քաղաքն Վան, որ եկեալ ինքնին հրամանաւ թագաւորին հաւաքեաց զխարաջն ի Հայոցս. և ոչ ետ թոյլ քաղաքի զլուն ձեռ-
45 նահաս լինիլ, որպէս և էր սովորութիւն նոցին, որ զքաղաքի խարաջն ինքեանք հաւաքէին, այլ ինքն ժողովեաց մէկ մէկ ոսկի,

որ է երկու զուռուշ կէս. յորոյ աւուրս էր Տուրսուն փաշայն ի քաղաքս[22]։

Դարձեալ ՌՃԽ (1691) թուին, յունվար ամսոյ 6, յաւուր Ցայտնութեան տեառն, զՇէկ Միրզայն և զՄարդանենց Ատոմն
5 կախեցին ի քաղաքս Վան, յոր աւուրս էր փոքր Օմար փաշայն ի Վան, բայց զսոքա զուլերն ետուն կախել, զի կարծեցին թէ զխարաջ նոքա սահմանեցին. որ յինքեանցն յետս նահանջեցին. և վայվօտայ բերին, քանզի Շէկ Միրզայն յՍտամպօլայ եկն, յորոց պատճառէ ոխացեալ սպանին զնոսա, որ և այս Օմար փա-
10 շայս յետ հինգ ամսոյ և ինքն մեռաւ ասէն. և արտաքոյ թաղեցին[23]։

Ի սոյն թուին, յամսեանն օգոստ || տոսի Եղիազար կաթողի- 115
կոսն վախճանեցաւ. յԷջմիածին. և եղև ի տեղի նորա կաթողիկոս աշակերտ նորին Նահապետ կաթողիկոսն[24]։ Սա ի ՌՃԽԵ (1696)
15 յունվար 6 ղԿարմիր Աւետիսն օրհնեաց կաթողիկոս Աղթամարայ՝ ներհակ Թումայ կաթողիկոսին[25]. և Թումայն, զԱրծկեցի Սահակ պարոնտէրն օրհնեաց կաթողիկոս ընկեր իւր։

ՌՃԽԱ (1692) յապրիլ 13, ի յառաւօտէ աւուրն արեգակն նուազեցաւ ի լուսոյն և դարձաւ ի գոյն կապարի. և մէգ պա-
20 եաց զերկիրն այնպէս, որ մարդիկ զմիմեանս ոչ տեսանէին ի մէջ ցերեկի և մինչև ցերեկոյին կարմիր փոշի տեղաց յերկիր, վասն մեղաց մերոց[6]։

Ի սոյն ամի սաստիկ մահ եղև անդրանկաց։

Եւ դարձեալ ի սոյն ամի Իսմայիլ փաշայն տասն տասն
25 խուրուշ խարաջ էառ։

Ի սոյն ամի հոկտեմբեր 27, յաւուր հինգշաբթի, սաստիկ շարժ եղև ընդ երեկս երեք-չորս անգամ[27]։

ՌՃԽԲ (1693) հոկտ[եմբեր] 9 մայրս մեռաւ։

ՌՃԽԴ (1695) Գուրճի Մահմատ փաշայն եկն ի քաղաքն
30 Վան յօգոստոս 18. սա ետ պլիկ կտրել և զտարաղամ շինեաց. և ի նոյեմբեր 20 մանզուլ եղաւ. սա երկու անգամ մախթու էառ ամենայն վանօրէից[28]։

Ի սոյն թուին սուրբ Երուսաղէմայ նուիրակ Մխիթար վարդապետն ի քաղաքն եմուտ հինգ հոգւով։

35 Ի սոյն թուին մարտ 5 մահտեսի Շահպանդար խոճայ Սահակն մեռաւ ի Խոշապն և յետ վեց աւուր ապա բերեալ ի քաղաքն թաղեցին յաւուր տօնի սուրբ Լուսաւորչին։

ՌՃԽԵ (1696) յամսեան մայիս ահագին շարժ եղև յերկիրն Մակուայ, || որ և սուրբ աթոռն Թադէոսի խախտեալ բեկբեկեցաւ[29]։ 116

40 Ի սոյն թուին ի քաղաքն Բազէշ, յունիս 10, սաստիկ շարժ եղև և բազում մեծածախ շինուածք, տունք և ապարանք կործանեցան և աւերեցան և բազում անձինք մեռան։

Ի սոյն թուին փետրվար 8 Զաթբաւիլ օղլի Ուսուֆ փաշայն եկն ի Վան։

45 ՌՃԽԶ (1697) մեծ պահոց առաջի երկուշաբթի Տուրսուն փաշայն ի Վան քաղաքն եմուտ և ի մարտի աւուր 20, գար-

նանամտին սպան ի զօրաց իւրոց ոգիս տասն. և այլք գաղտ փախեան, քանզի կարաւան էին թալանեալ. և ի յայսմ փախըստական զօրացն այր ոմն մնաց ի Խօշապ առ պարոնն, որոյ անուն Խուչուկ Մուստաֆայ ասէին, որ եղև այնքան անուանի զօրաւոր, մինչդի հոչակեալ համբաւեցաւ անուն նորա առ թագաւորն, որ և ի ՌՃԽԸ (1699) առաքեաց թագաւորն նմա խիլայս. և հրամայեալ զօրս ժողովել և գնալ ի վերայ Բասրայու, որ ելեալ գնաց բազում զօրօք և անդէն սպանաւ[30]։

Ի սոյն թուին Յառաջնաւորաց պահոց չորեքշաբթի, որ էր յունվար 27, Կարապետ վարդապետն վախճանեցաւ ի Վարագ. սա եկաց առաջնորդ զամս 17 և ի նոյն օր մեռաւ յոր.ում ծնեալն էր։ Եւ քաղաքացիքն առաքեցին ի Իաղէշ և բերին զՍտեփաննոս վարդապետն. և ի մարտի 22 կարգեցին զնա առաջնորդ քաղաքիս Վանայ, որ եկաց 18 տարի։

Ի սոյն թուին զՎարագայ վանքիլ խոջայ Խանամիրն և զՎարագայ տէր Մարգարայն ծեծեցին զուլ աղասիքն. և ամէն մէկին ԴՃ (400) փայտ զարկին և զԿարապետ վարդապետի ապրանքն խնդրէին։

|| Ի սոյն թուին սպահանցի Ստեփաննոս եկեալ յԷջմիածին 117
նոյեմբեր 2 եղև կաթողիկոս և աքսորեաց զՆահապետան[31]. և դարձեալ ի սոյն թուին հաստատեցին կրկին զնահապետն և զՍտեփաննոսն ընկեցին[32]։

Ի սոյն թուին Հոգւոյ գալստեան երկուշաբթի Թումայ կաթողիկոսն Աղթամարայ էառ զՎան մայիս 23, յաւուրս Տուրսուն փաշային. և յաջորդ ամի ապրիլ 1 Թումայ կաթողիկոսն վախճանեցաւ։ Սոյն Թոմայ կաթողիկոսն զձեռնադրութիւն իւր առեալ էր յԵղիազար կաթողիկոսէն Էջմիածնայ։

Ի սոյն թուին Մարտիրոս վարդապետն նորոգեաց զՎարդիկ հօր եկեղեցին զանազան յօրինուածով. սա յաշակերտաց Բաղիշեցի Վարդան վարդապետին էր։

ՌՃԽԷ (1698) յամսեան փետրվարի Ստեփաննոս կաթողիկոսն վախճանեցաւ Յերևան ի բանտի, բազում չարչարանօք, յորոյ վերայ լոյս էջ[33]։

ՌՃԽԷ (1698) մարտ 12 Սարի Օսման փաշայն եկն ի Վան և յուլիս 4 գնաց. սա սպան զՍինան տաճիկն, զի և ինքն մի ենգիչարի սպանեալ էր[34]։

Ի սոյն թուին յօգոստոս 21 Սլի փաշայն եկն ի քաղաքս Վան երկու որդւովքն։ Այս այն Ալի փաշայն է, որ յառաջագոյն՝ ի ՌՃԼԲ (1685) թուին եկեալ էր ի քաղաքս և զշրջապատ խանդակն ետուր պեղել։ Սա հոկտեմբեր 22 գնաց ի պատերազմ ի վերայ Մանծկերտու և այրեաց բազում գաւառս. ապա դարձաւ ի Վան. և սպան զՇարբանն, զՇատոն, և զմիւս այլ ոմն Հայ կախեաց ի միում աւուր ի դեկտեմբեր 8։ Սա զԴաղտագրան մօտի աղբիւրն, որ է մերձ չահիրին, կամարակապ շինեաց յիշատակ իւր և գնաց ի Բասրայ։

|| Ի սոյն թուին յօգոստոս 2 Կայծակ Յովհաննէս վարդապետն եղև կաթողիկոս Աղթամարայ։ 118

Ի սոյն թուին Թօխմախ ըռէս Միրաքն զասնաֆի աւելորդ գլխահարկն դաւթարով սահմանեալ հաստատեաց, որ ամենայն ոք թէ ուսթաքար և թէ ռամիկ տացէ զխարաջն ըստ դիպման աւուր և ժամանակին[35]։

5 ՌՃԽԸ (1699) ի մուտն յունվարի, մեծ և անուանի, Արդար Իսահակ վարդապետն եկն ի Վան, որ էր այր ծերունի և յոյժ առաքինի. և ամենայն ներքին և արտաքին դիտութեամբ և փիլիսոփայական իմաստութեամբ զարդարեալ. ե քաղաքացիքն յոյժ պատուով ե փափագանօք ընդունեցին զնա իբրև զլուսաւո-
10 րիչն Հայոց. և յետ երեք ամսոյ մեծ պարդևօք առաքեցին զնա յաթոռն իւր ի Թադէոս Առաքելոյ վանս։

Ի սոյն թուին յաւուրս Ալի փաշային մարդագլուխ մէկ մէկ ռուպ խառաջի կոտոր ժողովեցին. և միւս տարին այս ծեր Ալի փաշայս յունիս 22 գնաց ի վերայ Բասրայու երկու որդովք
15 հրամանաւ թագաւորին, զի Արապն պատեալ էր զնա շուրջանակի. և հասեալ ի Բաղդատ և անդ մեռաւ[36]։

Ի սոյն թուին սեպտեմբեր 13 ի հասարակ օրն արեգակն խաւարեցաւ ի լուսոյն. և եկաց այնպէս ժամս երկու և աստեղք երևեցան յերկինս և Ջոմուշ օղլի Խալիլ աղայն, որ էր յաւուրսն
20 յայնոսիկ նստեալ ի տեղի փաշային՝ հրամայեաց և ի նոյն օր թափօր ելին Հայ և Թուրք[37]։ Եւ ի սոյն թուին սոյն Ջամուշչի Խալիլ աղայն և Նոհ աղայն առաքեցին ի Խօշաբ. և մեծարանօք կոչեցին զԻբրահիմ բէկն ի պատիւ, որ էր տէր երկրին այնորիկ. սա || որդի էր Շամզդին պարոնին, որ սպանաւ յՕմար փաշայէն, 118
25 ի ՌՃԼԲ (1683)։

Ի սոյն թուին պապն Ֆռանկաց ընծայս առաքեաց հոգևոր աեառն մերոյ Նահապետ կաթողիկոսին՝ զարմանալի աթոռ մի և պատուական գաւազան մի և լաւ խալիչայ մի, որք էին անտեսանելի յաչաց մարդկան. և արժէին վեց քէսայ փող աւելի և
30 ոչ պակաս[38]։

ՌՃԽԹ (1700) տէր Յուսկան որդւոյ եկեղեցին Նորոգեցաւ ձեռամբ Կոփեցի Սարգիս վարդապետին ի Բերկրի[39]։

Ի սոյն թուին յապրիլ 27 Սարի Օսման փաշայն եկն ի Վան, և յուլիս 15 գնաց ի վերայ Խիզնայ և Ջեռնակայ[40]. և անդէն
35 մանզուլ եղև[41]։

Յօգոստոս 10 ի յայս թիւս յԱստուածածնի բարեկենդանի շաբաթ օր, որ է Եփեսոսի ժողովն, մեր Վանայ իշխանքն ոչ թողին յեկեղեցիսն «Ով հրաշալի» ասել։

ՌՃՄ (1701) յաւուր տարեմտի Հայոցս, որ էր նաւասարդի
40 1 և սեպտեմբեր 27 Հռոմայեցւոց, յաւուր ուրբաթու Իսմայիլ փաշայն եկն ի Վան, յոյժ զանազան փառօք երևելի և պատուական զարդուք։ Այս Իսմայիլս եկեալ էր ի վերայ Ջեռնակայ բերդին և անտի ելեալ եկն ի քաղաքս ի նոյն կողմանց. և եկաց մինչև յունվար ամսոյ 10. և անդէն յուրբաթ գիշերի գաղտ ի քա-
45 ղաքացեացն առեալ ընդ իւր զսակաւս ի զօրաց իւրոց՝ թողեալ աստ զորդին իւր և զինչսն և զայլ ամենայն զօրսն և յերեկոյին

եալ ի քաղաքէն և փախստական գնաց մինչև ի Զօրս[42], որ և իմա-
ցեալ զօրս Մանմուտանայ եկին ի վերայ նորա և թալանեցին ի
ճանապարհին. և զոմանս սպանին և զրաղումս վիրաւորեցին,
սակայն ինքն մա || զապուրծ անկեալ ի Զօրս զերծաւ։ Եւ զի սա 120
5 յաղթեալ էր զհարայն յանցեալ ամին, այն որ ներհակ էր ընդ-
դէմ Պարսիցն, յորոյ պատճառէ եղեալ էր երախտաւոր Պարսիցն,
որք սիրով ընկալան զնա, և զի ապստամբեալ ևս եղև ի յիւր
թագաւորէն և գնաց անդ. և արդ՝ թէպէտ յառաջ սիրով ընկա-
լաւ զնա խանն Զօրսայ, բայց յետոյ խորհրդով պարոնին Խոշա-
10 պայ կողոպտեալ մերկացոյց զնա յամենայն փառացն և արար
որպէս յետին աղքատս՝ ասելով, թէ «Դու լրտես եկեալ ես յՕս-
մանցւոց յերկիրս մեր», և կապանօքն առաքեաց զնա առ խանն
Թաւրիզոյ. և նա ազդ արար շահին ի Սպահան, թէ այսպէս
երևելի և անուանի ոմն եկեալ է ի մեզ. և զինչ որ գու հրամա-
15 յես այնպէս առնեմք ընդ նմա։ Եւ նա հրամայեաց մընալ անդէն
մինչև ինքն ազդ արասցէ թագաւորին՝ և ներում խնդրեսցէ, որ
և արար ինքն. և մինչ եկն դեսպան ի թագաւորէն տանել զնա
փառօք՝ նա անդէն յաքսորս մեռեալ էր, ի մուտն ՌՃԾԻ (1703)
թուին[43]։ Սա լուաւ թէ ի թագաւորէն ֆարման եկեալ է իւրոյ
20 գլխոյն, յորոյ պատճառէ քաղաքացիքն կալան զդատաւորն քա-
ղաքին, և ի բերդն ձգեցին ի բանտի, զի նա ազդեալ էր փաշային
զֆարմանն, որ եկաց ի բանտի, յունվարի 10-էն մինչև մարտ 20։

Ի սոյն թուին ապրիլ 24 ծեր Իսմայիլ փաշայն եկն ի Վան
ի Ցարզրումայ, սա ազգական էր Իսմայիլ փաշային, որ փախեալ
25 էր, որ և աստ մեռաւ[44]։

Ի սոյն թուին մարտ 7, որ էր Մեծ պահոց առաջին ուրբաթն,
յերեկոյեան ժամուն. սաստիկ շարժ եղև ի քաղաքն Վան, բայց
ՉԱՍ ոչ եղև, և դարձեալ ի նոյն գիշերն և ի կիրակի ցերեկն,
|| երեք և չորս անգամ շարժ եղև. և հասեալ ի չորեքշաբթի 121
30 առաւօտեան ժամուն սաստիկ և անդադին շարժ եղև, որ քաղաքն
ամենայն ահարեկ եղեալ սասանեցան, և Հայ և Թուրք ամենե-
քեան թողեալ զտունս ելին ի քաղաքէն ի դուրս. և անմարդա-
բնակ եղև քաղաքն ամենայն. և ելեալ ի դուրս կազմեցին վրանս
և անդէն բնակեցան. և սակաւ ոմանք որք մնացին ի քաղաքն,
35 յեկեղեցիսն գնացեալ ննջէին տամբք և ընտանեօք. և հասեալ ի
միւս շաբաթ օր, որ էր մարտի 15, դարձեալ անագին շարժ եղև
ի հասարակ աւուրն, յորմէ բազում տունք խախտեցան ի քա-
ղաքն. և սակաւք բլան. մինչզի և միջին դուռն քաղաքին ևս
խախտեցաւ, բայց ՉԱՍ ինչ ոչ եղև մարդոյ նախախնամու-
40 թեամբն Աստուծոյ. և այսպէս եկաց յերերման իբրև զնաւ ի վերայ
ջրոյ մինչև յօր գարնանոյ, և հասեալ ի նոյեմբեր 30 յաւուր
կիւրակէի ի վեց ժամուն սաստիկ և անագին շարժ եղև և ոչ ՉԱՍ[45]։

ՌՃԾԴ (1705) Նահապետ կաթողի || կոսն մեռաւ[46]. և ՌՃԾԶ 122
(1707) թիւն սպահանցի Աղէքսանդր վարդապետ եղև կաթողիկոս
45 Էջմիածնայ։

ՌՃՀԵ (1726) խիստ անդրանկամահ եղև յաշխարհի և մա-
նաւանդ թէ ի քաղաքս Վան։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այս երկու վկայությունն էլ տե՛ս և հմմտ. Գրիգոր Վարագեցու ժամանակագրության հետ (վերևում, էջ 381—382)։

2. Առավել մանրամասն տե՛ս վերևում, էջ 283, 285, ծանոթ. 1, ներքևում էջ 482։ Փիրզալեմյանը հավանաբար XII ժամանակագրությունից մուծել է, ինչպես այստեղ, այնպես էլ Գր. Վարագեցու ժամանակագրության Գ. Աղանյանցի հրատարակության բնագրում։

3. Մանրամասն տե՛ս վերևում, էջ 283—284։

4. Տե՛ս և հմմտ. վերևում, էջ 284—285, ծանոթ. 8, Մծ 1, էջ 355, 381, ծանոթ. 12։

5. Տե՛ս և հմմտ. Մծ, 1, էջ 356։

6. Ավելի համառոտ տե՛ս նաև Գր. Վարագեցու մոտ (վերևում, էջ 382)։

7. Իսահակ ժամանակագիրն այս եկեղեցու վերանորոգումը նշում է 1680 թ. (տե՛ս Մծ, 1, էջ 309)։

8. Այս վկայությունն արդյոք չի վերաբերում 1679 թ. հունիսի 4-ին տեղի ունեցած երկրաշարժին. և այստեղ հավանաբար տարեթիվը սխալ է նշված։

9. Տե՛ս Գր. Վարագեցու մոտ (վերևում, էջ 382)։

10. Ակնարկում է Եղիազար Այնթափցու Էջմիածնում կաթողիկոս դառնալը։ Մատենադարանի № 1512 ձեռագրի հիշատակարանում սրա կաթողիկոս դառնալը նշված է «ՌՃԼԱ յաւուր վերափոխման սբ. Աստուածածնի կիրակին...» (էջ 559բ)։ Այսինքն 1682 թ. օգոստոսի 13-ին։ Թեև մի այլ ժամանակագիր այս դեպքը նշում է «... յամսեանն օգոստոսի, Յովակիմայ և Աննայի տօնին» (Մծ, 1, էջ 310)։ այսինքն օգոստոսի 22-ին։

11. Տես. և հմմտ. Մծ, 1, էջ 357։

12. Տե՛ս և հմմտ. նույն տեղում, էջ 357։

13. Տե՛ս և հմմտ. նույն տեղում, էջ 357։

14. Տե՛ս և հմմտ. նույն տեղում, էջ 357։

15. Համառոտ ձևով տե՛ս Մծ, 1, էջ 357։

16. Ավելի համառոտ տե՛ս Մծ, էջ 357։

17. Այդպես Գ. Աղանյանցի հրատարակության բնագրում։

18. Այս բանը, ըստ երևույթին, Օսմանական Թուրքիայում ժողովրդից դրամ կորզելու մի միջոց էր։ Այդ պատճառով էլ յուրաքանչյուր փաշա զանազան կամայական կարգադրություններ էր անում, իր իշխանությանը ենթակա շրջանում։ Դրա մասին է խոսվում նաև 1672 թ., Բագեշում ընդօրինակված Մաշտոցի հիշատակարանում. «Զի յայսմ ամի եկն փաշայն ի Ստամբուլայ ի քաղաքն Բագէշ և բազում վիշտ ե նեղութիւն հասուց քրիստոնէից և արար զազգայ, թէ քրիստոնեայ անուն ոչ դիցէ գօտի։ սու ամենեքեան... ընկեցին զգօտիս իւրեանց և եդին քօլօղ, ոմն գալփակ և ոմն թաղիս, ոմն գլուխ ի բաց չրջէր [ի] վերայ երկրիս»... (№ 4904, էջ 284բ)։

19. Տե՛ս և հմմտ. Մծ, 1, էջ 358։ Այստեղ հեղինակն առանձին դեպքերի մասին նշում է, «որ և մեք աչօք տեսաք»։

20. Գյուղ պատմական Ռշտունիքում։

21. Զարմանալին այն է, որ Վարդան Բաղիշեցին ոչինչ չի հաղորդում ոչ իր ժամանակագրության մեջ և ոչ էլ իր թողած հիշատակարաններում։ Անանուն Վանեցի մի ժամանակագիր մանրամասն է հաղորդում այդ պայքարի մասին, նշելով նաև պատճառը (տե՛ս Մծ, 1, էջ 358)։

22. Տե՛ս և հմմտ. Մծ, 1, էջ 358։

23. Տե՛ս և հմմտ. նույն տեղում, էջ 358։

24. Մի ժամանակագիր Նահապետի կաթողիկոս օծվելը նշում է 1691 թ. օգոստոսի 20-ին (Մծ, 1, էջ 310)։

25. Այդ մասին մանրամասն տե՛ս Մծ, 1, էջ 284։

26. Տե՛ս նույն տեղում, էջ 359։ Այս տեղեկությունը հաստատում է Միքայել Բոլենցին 1692 թվին իր հիշատակարանում միաժամանակ հաղորդելով հետաքրքիր այլ տեղեկություններ ևս։ Բերում ենք հիշատակարանի մեզ հետաքրքրող մասը.

«...աւարտեցի ի դառն և ի նեղ ժամանակիս, որ կամք ի տարտարոս ի ձեռս այլազգաց և էմք խիստ նեղեալ և հալածական եղեալ... ՌՃԽ (1691) թուին եղև շարժ, բազում տեղիք բլան, բազում մարդիկք մեռան։ Եւ եղև հեծելաբուքիւն (sic)՝ Մոկաց զբերոն զնաց ի վերայ Ցողմայ և զոչխարն թալան երեք. յետոյ յանկարծակի եկաւ Բուխատն ի վերայ Մոկաց, ի Ցայտնութեան, բոլորն գՑիդի ձոր այրեցին և բազում ուար հարին. յետոյ Մոկաց Զինալպէկ գնաց ի Բոհտանից դէզօրէք աւերեց. զՍեղկպոց զեկեղեցին քակեց, զԱղբլուան թալանեց, զԿճաւ, ու զՑառՑանց, ու զՄակնի հարկաւոր արաբ. յետոյ եկաւ ազէմ, ի Ցակարոյ, Խանալալ անուն ի Մոկս առ ի հաշտեցուցանել զնոսա, բազում հարկ և տուգանս էառ, մինչև Ըսպարկերտ և Խարբոց. յետոյ բմբըսնեց մախդասիմ Սաֆար անուն ի Մոկաց քաղաքէն ի հետն տարաւ մինչև ի Նանենց. յետ այնորիկ քրիստոնայն ի յահէն անօրինացն փախըստական լեալ ի մէջ ձմրան։ Նանինից էջ ի Զրպին բոկոտամբ ի մէջ գիշերին և եկն ի բերդն Մոկաց ի բազում տանջանացն և ի ցրտաստուցէն կատարեցաւ ի Քրիստոս...։ Յետոյ ապրիլ ամսոյն ի յառաւօտման ժամէն մինչև ցինն ժամէ աւուրն արեկակն խաւարեցաւ, մութիր և փոշի թափաւ ի վերուստ, վասն մեղաց մերոց և կամք ի միջի և գվերջ Աստուած գ[իտ]է, գիտողն ամենայնի» (№ 5502, էջ 231ա, 232ա). պրոֆ. Օպպոլցերը 1692 թ. արևի խավարումը նշում է փետրվարի 17-ին և օգոստոսի 12-ին) („Canon der Finsternisse") էջ 276)։

27. Հմմտ. Մծ, 1, էջ 359։

28. Տե՛ս և հմմտ. Մծ, 1, էջ 359։

29. Իսահակ վարդապետ ժամանակագիրը, 1696 թ. երկու անգամ է երկրաշարժ հիշում, որոնցից մեկը նշում է ամսաթվով՝ ապրիլի 14-ին (Մծ, 1, էջ 309, 311)։

30. Համառոտ կերպով տես Մծ, 1, էջ 359։

31. Այս վկայությունը հաստատում է Իսահակ վարդապետ ժամանակագիրը (Մծ, 1, էջ 310)։ Իսկ մի ուրիշ հիշատակագիր հետևյալ հետաքրքիր մանրամասնություններն է գրում։ «[Ա]րդ գրեցաւ... թվին ՌՃԽԵ (1696) ի սեպտեմբեր Ի (20)։ Այս ամսոյս Ը (8) օր Նահապետ կաթողիկոս մայրուլ եղաւ, ԺԸ (18)-ն օր Զուղայեցի Աղէքսանդր վարդապետն եկաւ Էջմիածին փոխանորդ Ըստեփաննոս կաթողիկոսին։ Եւ Նահապետ կաթողիկոսն պիտի տանէն ի Տաթևոյ յանապատն, ճանապարհին փախաւ, գնաց ի Թարվէդ քաղաքն մտաւ շահի տներ. յետոյ եկաւ Երևանայ խան, կաթողիկոս հետևով հանիցեն զնահապետն շահի տնէն բերեն Երևան։ Նոյեմբեր ամսոյ ի Ա (1) եկաւ Ըստեփաննոս կաթողիկոս Էջմիածին, կիրակի օր, երկուշաբթի ձեռնադրեցաւ կաթողիկոս, օծաւ Ցամթիցի Մինասէն, որ է առաջնորդ լուսաբուղխ դերեզմանին. ԺԴ (14) եպիսկոպոսք էին՝ մեծն Սահակ վարդապետ, Մինաս վարդապետ, Մուղնու առաջնորդ Գրիգոր վարդապետ, Ապամասալանից Մարուգ վարդապետ, Ոհանավանից առաջնորդ Ցովասափ վարդապետ, Ամենափրկչին առաջնորդ Մեսրոպ վարդապետ, Ագուլիսայ Ոհան վարդապետ» (№ 5495, էջ 78բ)։

32. Այս մասին տե՛ս այլ վկայություններ ևս, Մծ, 1, էջ 285, 287, ծանոթ. 10, էջ 312։

33. Տե՛ս Մծ, I, էջ 284, 312։

34. Տե՛ս Մծ, 1, էջ 359։

35. Արդյոք այս միջոցառումն է եղել 1702 թ. վանեցիների ապստամբության պատճառը (հմմտ. Մծ, 1, էջ 381)։

30. Տե՛ս և հմմտ. նույն տեղում, էջ 359։

37. Հմմտ. նույն տեղում, էջ 359։ Ըստ պրոֆ. Օպպոլցերի, 1099 թ. արևը խավարել է մարտի 31-ին և սեպտեմբերի 23-ին (բա Գրիգորյան տոմարի, տե՛ս „Canon der Finsternisse", էջ 278)։

38. Տե՛ս և հմմտ. Մծ, 1, էջ 359։

39. Մատենադարանի № 4034 ձեռագրի հիշատակարանում, գրիչ Աբրահամ գրիչը, 1697 թվին, նրա մասին հետևյալ հետաքրքիր տեղեկությունն է թողել. «... յիշեցէք ի

մաքրափայլ յաղթս ձեր... աէր Սարգիս մեծ վարդապետն (զոր Կոփեցի ասեն), որ է ի Կարնոյ մայրաքաղաքէն և այժմ է արքեպիսկոպոս և առաջնորդ մեծ նահանգին Վաղարշակերտոյ բազմեալ յաթոռ պոտոաֆրոնդէսիսական ի սր. և յարքայաշէն վանս, որ...կոչի սր. Գրիգոր, որ բազում փափաքմամբ և եռանգնոտ սիրով ետ գծագրել զսր. սառս...» (էջ 223բ)։ Բնագրում փակագծերում նշվածը գրված է լուսանցքում։

40. Մի ժամանակագրի մոտ այս տեղանունը «Զըրկանայ» ձևով։ Կարծում ենք ռուսյզը Զեռնակն է, գյուղաքաղաք Խոշապից 4 ժամվա ճանապարհ հեռու, Խոշապ գետի ափին։

41. Տե՛ս և հմմտ. Մծ, 1, էջ 359։

42. Բերդ, որի անունով էլ կոչվում է խանությունը։ Վերջինս ընկած է Մակուի, Խոյի և Նախիջևանի խանությունների միջև։

43. Տե՛ս և հմմտ. Մծ, 1, էջ 360։

44. Տե՛ս և հմմտ. նույն տեղում, էջ 360։

45. Տե՛ս և հմմտ. նույն տեղում, էջ 360։

46. Մի ժամանակագիր նշում է ամսաթիվը՝ հունիսի 13, տես նույն տեղում, էջ 304։